


Կանոնագրական

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՃԱՌԱԿԱՆԱՑ



ԲՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Քիչ 28



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՀԱՅՐԱՊԵՏԱՆԻ ԿԱՆՈՆ

ՆԱԽԱՅԻՐ

ՅԱՆՈՐԱՆԱԿԱՆ

ՄԱՐԿՈՍ

ՄԱՐԿՈՍ

ՄԱՐԿՈՍ

ՄԱՐԿՈՍ

82

ՄԱՐԿՈՍ

ՄԱՐԿՈՍ

ՀԱՆՐԱՓԻՏԱԿ

ՀԱՆՐԱՓԻՏ ՀԱՆՐԱԿԻԺԱԳՈՒՄ HANRAKIDAGUE

ՀԱՐԱԹԱԿԱՆ ՄՈՋԵԼՈՒՄ JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

2. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 28 || 12 ՅՈՒԼԻՍ 1903



ԱՐԵՒԱԳԱԼԸ

Հորիզոնէն վար լոյսի պար մը կ'իջնէ,
Ընդելուզուած՝ ճաճանչներով ոսկեհիւս.
Շուտ կ'անհետի մութն ու խաւար կուտայ խոյս,
Աշխարհ արփւոյն հուր գալուստը կ'ողջունէ:

Կենդանութիւն կը հագնին դաշտ ու լեռներ,
Զուարթ երգերը վիշտ կը լսուին զեղջուկին.
Ու զմրուխտի, աղամանդի երանգներ՝
Կը փողփողին մէջը լոյսի վառ զըրկին:

Խորհուրդներու մըռայլը շուտ կը մարի,
Բընուկեան այս հրրատ զարթօնքին հանդէպ,
Ու կը հրճուի յուսահատ սիրտը կարի:

Կը սրբըլին թօնուտ աչքերը տըխուր,
Ուրախութեան ժպիտներուն տակ անհուն.
Ցնծուն երգով կը լեցուի սիրտը թափուր:

ՄԻՍԱԲ ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆ



ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՎԱՐՓԱՐԱՆԻ ՄԷՋ

29. — Հակառակասիրութիւն

- Ահա շատ գեղեցիկ կերպաս մը, ըսաւ Վարդուհի:
 — Ոչ, գեղեցիկ չէ, կը պատասխանէ Իսկուհի, գոյնը նետած է, անճաշակ է:
 Վարդուհին կը փոխէ խօսակցութիւնը:
 — Այսօր շատ գէշ եղանակ մ'է:
 — Օ՛հ, ոչ այնչափ գէշ, կը պատասխանէ Իսկուհի:
 — Երէկ օրիորդը տկար կ'երեւէր:
 — Ես շատ լաւ տեսայ զինքը:
 Այսպէս շարունակաբար:
 Ահա թէ ինչ է հակառակասիրութիւնը:

Անշուշտ մենք ստիպուած չենք ամենքին համակարծիք ըլլալ, այլ ընդհակառակը, լաւ է վարժուիլ անձնական կարծիք մը ունենալու, բայց եթէ այս կարծիքը հակառակ է անոնց, որոնց քով կը յաճախենք, պէտք է ինչ ինչ փոփոխութեամբ մեղմենք: Երբ Վարդուհի և Իսկուհի կը խօսէին, նկատեցիք որ Իսկուհի ոչ մի զիջում կ'ընէր: Բըտուլեամբ, կոշտութեամբ կը հակառակէր անոր: Բարեկամական յարաբերութիւնները անկարելի է որ մնան հակառակասէր բնաւորութիւններու մէջ:

30. — Բոլոր կրօնները յարգելի են

Ինչ ինչ դպրոցներու մէջ, այլակրօն աշակերտներ կան: Տըղոցմէ ոմանք կը նախընտրեն յարաբերութեան մէջ չըլլալ այն ընկերի հետ, որ իրենցմէ տարբեր կրօնք ունի. կը խորհին, թէ անոնք որ ուրիշ կերպ կը մտածեն, իրենցմէ տարբեր բան մըն են: Զիրենց գերիվեր կը կարծեն միւսներէն:

Համոզուեցէք, որ բոլոր կրօնական հաւատալիքները յարգելի

են, որովհետեւ բոլորն ալ ինչ որ ըլլայ իրենց անունները, կըրնան հոգին ազնուացնել, բարձրացնել, մեծցնել, եթէ կարենան լաւ մեկնել:

Յարգեցե՛ք ուրիշներու կարծիքը, եթէ կը փափաքիք որ ուրիշներ ալ ձերը յարգեն:

31. — Ծննդավայրի սերը չարգիլե՛ր մարդասիրութիւնը

Մարդս կը սիրէ իր ծննդավայրը բոլոր սրտովը, այս հասկընալի է, բայց այս սէրը պէտք չէ մարդս մինչեւ իր հայրենակից չեղողները արհամարհելու մղէ:

Ամէնն ալ եղբայրներ են, և այս եղբայրութենէ աւելի բարձր եղբայրութիւն կայ, այն է մարդկային եղբայրութիւնը, որ աւելի վեհ եւ ազնիւ է միւսէն:

Օտարական մը օգնութեան կը կարօտի: Զըսէք, «անոր համար բան մը պիտի չընենք, որովհետեւ մեզ ազգակից չէ»: Խորհի՛ք, որ մարդ է, կը նեղուի կամ կը տառապի, ինչպէս մենք կրնայինք նեղուիլ, տառապիլ: Մենք մեզ հարցնենք, թէ ի՞նչ պիտի փափաքէինք, եթէ օտարութեան մէջ լինէինք: Նեղութեան մէջ գտնուողներուն համար եղբայրական սէր, գորով ունենալու է, ինչ որ ալ լինի անոնց անունը և ծնունդը: Նիւթական նեղութեան մէջ իրարու օգնելու է:

32. — Գործունեայ գութք

Մարիամ ձմրան ցուրտ օր մը փողոցին մէջ կը հանդիպի աղքատ տղու մը, որուն կօշիկները այնչափ մաշած էին, որ բոպիկ ոտքերը կ'երեւային: Մարիամ լաւ սիրտ ունի, աչքերը արտասուքով կը լեցուն այս խեղճ տղան տեսնելով: Բայց աղքատին քովէն կը հեռանայ եւ վայրկեան մը ետք ալ անոր վրայ չխորհիր: Փոքրիկը յուզած էր Մարիամի սիրտը, բայց նա կարեկցելէն զատ բան ըրած չէր:

Զապէլ կ'անցնի այն միեւնոյն փողոցէն. ան ալ կը հանդիպի նոյն աղքատին: Սիրտը կը յուզուի Մարիամին պէս, և այս թշուառութիւնը տեսնելով աչքերը արտասուքով կը լեցուն անոր պէս: Այն ատեն կը մօտենայ տղուն, կը հարցափորձէ ու կը լսէ անոր թշուառութեան դժնդակ պատմութիւնը: Յետոյ անոր կ'ըսէ «Ինձի հետեւէ», ու կը տանի մօրը մօտ ըսելով. «մայրիկ, կ'աղաչեմ, այս աղքատ տղուն համար բան մը ընենք: Զեմ կըրնար դիմանալ խորհելով, թէ գրեթէ անիկա բոպիկ է, մինչդեռ

ես լաւ կօշիկներ ունիմ: Պէտք է օգնենք, որ այս դժբախտը ցրտէն չնեղուի»: Եւ մայրը, իր աղջկան խօսքերուն և զգացումին համար շատ ուրախացած, միջոցը կը գտնէ այն աղքատին օգնելու:

Ահաւասիկ գործունեայ գուրը, նա՝ չբաւականանար թշուառութեան վրայ ողբալով, այլ կ'օգնէ ու կը մխիթարէ:

33. — Գիտցիր անձնուէր քլալ

Փոքրիկ աղջիկ, այժմէն անձնուիրութեան վարժութիւն ըրէ: Կրնաս, որովհետեւ կարելի է ամէն պարագայի և ամէն տարիքի մէջ անձնուէր քլալ: Քեզ պիտի ըսեմ, թէ ինչպէս:

Դպրոցը, պարտականութիւն մը քեզ կը ձանձրացնէ, խորհէ, թէ այդ պարտականութիւնը կատարելով հօրդ, մօրդ, ուսուցչիդ և քեզ սիրող մէկին հաճոյք պիտի պատճառես: Ուրեմն կասարէ:

Երբ արձակուրդի ժամանակ տունը լինիս, կրնայ պատահիլ որ, հայրդ, մայրդ, եղբայրդ կամ քոյրդ հիւանդանան: Պէտք է որ մէկը անձուէր լինի, անկողնին քով նստի ու զանոնք խընամէ. այն անձը դո՛ւն եղիր:

Ուրիշ անգամ կրնայ պատահիլ, որ պէտք է ձանձրանալի ճանապարհորդութիւն մը ընել, քուկիներէդ մէկին համար նամակ մը գրել, որ չկրնար գրել, կամ անհաճոյ զբաղում մը ունենալ փոխանակ հաճելի խաղի մը: Ըհ՛, այս նամբորդութիւնը, գրէ՛ նամակը, յա՛նձն առ այս զբաղումը:


Այսպէսով անձնուիրութեան գործ մը կատարած պիտի ըլլաս, և կանուխէն պիտի զգաս այն ուրախութիւնը, որ կ'ունենան գիտնալով թէ ուրիշին օգտակար եղած եմ:

ՏԻԿԻՆ Փ. ՀԱՋԱՐԱՊԵՏԵԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՄՆԵՐ

- Մարդուս երջանկութիւնը կախում ունի ուսմունքէ ու բարի ընկերութենէ:
- Կեղծ բարեկամը՝ բորոտ շունէ ալ վատնաբազոյն է:
 - Գէշ արհեստ չկայ, այլ գէշ մարդիկ:
 - Բարութիւն մը երբ շատ տարածայնուի՝ իր շնորհքը կը կորսնցնէ:
 - Անկեղծութիւնն ո՛չ թէ բոլոր մտածածն ըսել է՝ այլ բոլոր ըսածին վերայ մտածելն:

Ը Ն Տ Ա Ն Ի Բ



Մինչ գարուն է, բնուծիւն շրքեղ,
Լրսե՞ս թռչնոյն զըւարթ գեղգեղ.
Հաստատած է բոյն նորակերտ
Փափկիկն ի բոյս, ծաղկին ի թերթ:

Մինչ կը հսկէ մայրիկն ըզգոյշ,
Իւր ծագուկներ ճճուեն քնքոյշ.
Մօր թեւոց տակ ապա ննջեն՝
Որոնք թռչիլ դեռ ուսած չեն:

Անթարթ աչօք դիտէ թռչուն
Թեթեւ յուզմանց իւր ծագերուն.
Սրտիկն հանգիստ չունի երբեք,
Այլ հուսկ ննջէ մայրիկն հէք:

Տեսէ՛ք, հանգչի, պատկե՛ր չըքնաղ
Բայց յուզեալ է իւր քունն, աւա՛ղ.
Խորհի ծագուց երանութեան
Իւր քնոյն մէջ իսկ յաւիտեան:

Այգուն ժամն է, ամենք զարթնուն,
Պատրաստի մայրն թողուլ զիւր բոյն.
Երգն արծակուի հեղիկ թռչնոց,
Մինչ կը թողուն իրենց մօր ծոց:

Մանկ՛իկ, դու եւս ունիս մի բոյն՝
Ուր վայելես երանութիւն.
Անդ կը ննջես իբրեւ հրեշտակ
Բո սիրելի մօր թեւոց տակ:

Բ.



ՀԱՄԱՌՕՏ ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

— Ի՞նչ է ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆը:

— Գրագիտութիւնն է գեղեցիկ դպրութեանց եւ հին ու նոր հեղինակներուն մէջ գտնուած ամէնէ աւելի նշանաւոր ու հատընտիր հատուածներուն կամ գրուածքներուն ներկուռ ու ներհուն ծանօթութիւնը: Գրագիտութիւնը կ'կոչուի նաեւ Գեղեցիկ Դպրութիւն, Գրականութիւն, Գրութիւն, Մատենագրութիւն. և այս զանազան անունները կ'նշանակեն միահաղոյն:

Ա. — Մտքի գործերը, մասնաւորապէս պերճախօսութեան կամ ճարտասանութեան գործերն արտադրելու արուեստը:

Բ. — Ազգի մը, թուականի մը գրական արտադրութեանց ամբողջութիւնը:

Գ. — Ծանօթութիւնն ա՛յն կանոններուն որք այս արտադրութեանց ուղղութիւնները կ'գծեն. գրական գործերուն ու նիւթերուն ուսումը: Դպրութիւնք հականիշն է Դիսութիւնքին: Դպրութիւններն ու գիտութիւնները միանալով իրենց մէջ կը բովանդակեն ուսման բոլոր առարկաներն և կ'կազմեն իմացական մշակութեան կամ մտքի հերկումին լիակատար ամբողջութիւնը:

Դրագիտութիւնը՝ նկատելով համեմատ նիւթերուն զօրս իր զբաղմանց առարկայ կ'ընէ. կ'հասկցուի Ա. ճարտասանութիւնը կամ Պերճախօսութիւնը, ի՞նչ ձեւի ներքեւ ալ արտադրուի այն:

Բ. Բանասեղծութիւնը և իր բազմաթիւ սեռերը:

Գ. Պատմութիւնը. — Դ. Այն ուսումները որոց նիւթերն են լեզուները, ամէն գրագիտութեանց գործինքը. Քերականութիւնը, Բանասիրութիւնը (philologie), Լեզուաբանութիւնը, Ե. — Վերջապէս այն ուսումները որոց նպատակն է կանոններ կարգել մտքի գործերուն, կամ անոնց արժէքը գնահատել, ինչպէս են Հոեմերոսութիւնը, Տաղաչափութիւնը կամ Բանասեղծաբանութիւնը (poétique), Գրագիտական Քննադատութիւնը, որ մտքին արտադրութիւնները կ'գնահատէ, Պատմական Քննադատութիւնը, որ կ'որոշէ աստիճանը վստահութեան զոր ներշնչելու է պատմութիւնը կամ որուն կ'արժանանայ իւրաքանչիւր պատմագիր:

Դրագիտութիւնը՝ համեմատ ժամանակին կրնայ բաժնուիլ, եւ կոչուիլ Հին կամ Նոր, եւ համեմատ երկրին, Յոյն կամ Լատին, Թուրք կամ Հայ, Փրանսական, Իսպանական, Անգղիական եւայլն:

— Նկատելով համեմատ մտքին որ կ'ոգեւորէ գրագիտութիւնը, Դասական կամ Վիպական է:

Նիւթերը որոց վրայ կ'շարագրէ համեմատ թուականներուն եւ համեմատ երկիրներուն, նոյնպէս կ'փոփոխի ձեւը՝ որուն տակ այս նիւթերը կ'մատենագրուին. եւ այս պատճառաւ շատ ճշմարտութեամբ ըսուած է թէ, « Գրագիտութիւնը մարդկային ընկերութեան բացատրութիւնն է, » կամ ըստ մեզ՝ ո եւ է ցեղի մը ոգւոյն ցոլացումն ու իտէպիւն հայելացումն է :

Գրագիտութիւնը մշակուած է ամէն թուականներուն մէջ, սակայն մասնաւորապէս քանի մը դարերուն փառքը կազմած է, որք կոչուած են Գրական դարեր, ինչպէս են՝ հին Յունաց մէջ, Պէրիկլէսի եւ Աղէքսանդրի դարերը. Հռովմայեցւոց մէջ՝ Օգոստոսի դարը. Իտալիոյ մէջ՝ Լէոն Ժ.ի դարը. Ֆրանսայի մէջ՝ Լուդովիկոս Ժ.ի դարը. Հայոցս համար ալ՝ Ս. Սահակայ եւ Ս. Մեսրոպայ Ոսկեդարը, ինչպէս այժմեանի թուրքաց համար ալ՝ կրնանք պարծանօք ըսել՝ Վեհ. Սուլթան ՀԱՄԻՏ Բ.ի դարը :

Գրագիտութիւնը ամէն քաղաքակիրթ ազգերուն մէջ դասական ուսմանց գլխաւոր առարկան է :

Գեղեցիկ դպրութեանց ուսումն է բոլոր ուսմանց մէջ թերեւս այն որ կ'հայթայթէ ամէնէ աւելի անոյշ վայելքները : Հոն է որ կ'սորվինք գրել ու խօսիլ հաճելի ու շահեկան կերպով. հոնտեղէն է որ կ'ծծենք ինչ բան որ կ'զարդարէ ու կ'գեղեցկացնէ ճառը կամ խօսքը մեծ գրագէտներուն կամ մեծ մատենագիրներուն մտածումներու եւ բացատրութիւններու նմանութեամբը : Գեղեցիկ դպրութիւնները ճոխապէս կը կահաւորեն յիշողութիւնը կը գեղեցկացնեն միտքը եւ զայն կ'զբաղեցնեն ախորժանքով. անոր կուտան մտածմունքի այն ճշտութիւնը, ճարտասանութեան այն ծաղիկը, ճաշակի այն նրբութիւնը զոր չենք գտներ անոնց քով որ զանոնք մշակած չեն : Վերջապէս գիտութեանց պէսպիսութիւնն եւ տարածութիւնն այնպէս է այսօր որ հարկաւոր է, անոնցմէ օգտուելու համար, ըլլալ միեւնոյն ատեն դպրութեանց մարդ : Նոյն իսկ գիտութեանց սկզբունքները պիտի ըլլաին անախորժելի եթէ անոնց հրապոյրներ փոխ չի տային գեղեցիկ դրպրութիւնները. ճշմարտութիւններն աւելի զգալի կ'ըլլան ոճին յստակ ճշգրտութեամբը, այն ծիծաղուն պատկերներովն եւ այն հանճարեղ դարձուածներովն որոնց ճարտար ձեւերուն տակ զանոնք կը ներկայացնեն մտքին :

Սոյն Գրագիտութեան Դասական Գիրքը կը բաժնենք երկու մասերու : Առաջին մասը կը բովանդակէ երկու բաժանումներ. Ա. Շարադրութիւնը եւ Բ. Բանասեղծութիւնը : Երկրորդ մասը կը պարունակէ նմանապէս երկու բաժանումներ. Ա. Հոեհոսութիւնը եւ Բ. Պերնախօսութիւնը :

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

— Ի՞նչ է ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆը :

— Շարադրութիւնը մտքի գործ մ'է, հանճարէն ու երեւակայութենէն արտադրուած, բարւոք ճաշակին վրայ հիմնուած և գրելու արուեստին պատուիրած կանոններուն համաձայն յօրինուած :

ՀԱՆՃԱՐԸ

— Ի՞նչ է ՀԱՆՃԱՐԸ :

— Հանճարը բնական տաղանդ մ'է, որ մեզ գերազանցել կուտայ ու է սեռի մէջ : Ամենէ աւելի բարձր դորութիւնն է այն որուն կարենային բարձրանալ իմացական կարողութիւնները : Հոմերոս, Վիրգիլիոս, Տանդէ, Գորնէյլ, Շէքսպիր, Բագրատունի բանաստեղծները. Փիղիաս, Միլէլ-Անճէլօ, Ռաֆայէլ արուեստագէտները. Կոպերնիկոս, Գալիլէոս, Նեւտոն, Բասդէսը գիտունները. Ալէքսանդր, Աննիբալ, Կեսար, Նաբոլէոն զօրապետները. ասոնք բոլորն ալ հանճարի մարդեր էին :

ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԻՒՆ

— Ի՞նչ է ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԻՒՆը :

— Հոգեկան կարողութիւն մ'է այն որ զօրաւոր կերպով կը յղանայ և կենդանի գոյներով կը նկարագրէ այն առարկաներն որոց վրայ մտածումը կը թառի :

Երեւակայութիւնը կը ծնանի խիղախ ու յանդուգն գաղափարներ, կը ներկայացնէ ոգեւորեալ պատկերներ, ազդուութիւն և արագութիւն կուտայ բացատրութեան : Կը բազադրէ իր պատկերները գծերով զորս յիշողութիւնը հաւաքած է և զորս մտքին կորովը (contention) կենդանացուցած է : Գրական մարդն այլեւս տկար, տարտամ, անորոշ, չփոթ ու ճապաղ կերպով չի նկարագրեր, երբ կենդանի ու պայծառ կերպով իր մտքին մէջ ըմբռնած, պատկերացուցած է իր առարկան, և թէ անոր տուած է պահանջուած բոլոր իր ուղադրութիւնը :

Օրինակի համար. պիտի ընէք մորկակոծ ու ըկրուզամերձ նաւու մը նկարագիրը: Նախ այս պատկերը ձեր մտքին կը ներկայանայ հեռացած ու քիչ մ'ալ չփոթ կերպով: Բայց կ'ուզէ՞ք որ ան ձեզ աւելի ներկայ ու մօտ ըլլայ. ձեր մտքի աչքովը թարթափեցէ՞ք այս պատկերը կազմող այլեւայլ մասերուն՝ օդին մէջ, ջուրին մէջ, նաւուն իսկ մէջ, ցամաքին վրայ ալ. տեսէ՞ք ինչ որ կ'անցնի. օդին մէջ խռովայոյզ քամիներ որ կ'մարտնչին, ամպեր որ կ'խաւարեն լոյսը, իրարու կը բաղխին, իրարու հետ կ'խառնուին և փայլակներէն ակօսուած իրենց կողերէն կը ժայթքէ շանթն ահարկու որոտումով մը. ջուրին մէջ, փրփրերախ կոհակաց մէջ որք կ'բարձրանան մինչեւ ամպերն ի վեր, ջրեղէն լեռներ կախուած անդունդներուն վրայ ուր կարծես նաւը կ'ընկլուզի և ուրկէ կ'սլանայ ալիքներուն կատարին վրայ: Դէպի ցամաք՝ սրածայր ժայռեր ուր ծովը կ'երթայ խորտակուիլ մօրնչելով, և որոնք կը ներկայանան նաւաղներուն աչքին նաւընկուզութի մը նոր բեկորներ, իրենց ճակատագրին արհաւիրի չարագուշակում. կայմերն իրենց առագաստներուն բռնութենէն կը կքին. կ'ճարճատին և կ'խորտակուին. նաւուն կողերն իսկ կը հեծեն կոհակներէն ծեծուած, և կ'սպառնան ճեղքուիլ. խելացնոր նաւուղիդն որուն ճարտարութիւնն սպառած կ'իյնայ, եւ ինքզինքը յուսահատութեան կուտայ, նաւաստիներ՝ անօգուտ աշխատանքէն ընկճուած և որք պարաններէն կախուած, կ'աղբսեն երկինքին, ողբուկոծի ճիչերով, որպէս զի օգնութեան հասնի իրենց վերջին ճիգերուն. դիւցազն մը որ զանոնք քաջալերելով կ'սրտապնդէ և անոնց կ'ներշնչէ վստահութիւն, որմէ ինքն այլ եւս անյոյս է:

Կ'ուզէ՞ք պատկերն ընել աւելի սրտաճմլիկ ու աւելի ահռելի, ենթադրեցէ՞ք նաւին մէջ հայր մը իր միակ զաւակին հետ, ամուսիններ որք իրարու կ'ըսեն. « Պիտի կորսուինք »: Ահաւասիկ երեւակայութիւնն ինչպէս կ'արգասաւորէ իր ընդգրկած նիւթերը խորհրդածելով զանոնք շրջապատող պարագաներուն վրայ, եւ նկարագրելով անոնց պատկերն ամէն կարելի ճամարտութեամբ: Պիտի խօսինք տակաւին այս թանկագին կարողութեան վրայ երրկորդ բաժանումինմէջ, կրքերը գրգռելու միջոցներն ընդլայնած ատեն:

ԳԻՏՈՒԹԻՒՆԸ՝ ԳԱՒԱՌԻՆ ՄԷՋ

(ՌԻՍՏՈՒՄ ՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ)

Գիտական ծանօթութիւններու կարեւորութիւնը՝ կեանքի բոլոր փուլերուն ու դիմայեղումներուն մէջ, ընդունուած ճշմարտութիւն մըն է այլեւս՝ ժողովուրդի ամէն դասակարգ, յետագոյն աղքատէն սկսելով մինչեւ ամէնէն հսկայ հարուստը, պէ՛տք ունին ատոնց։— Մէկ բառով-ապրելու համար հակառակ պարագային, տուժումներն անխուսափելի են եւ ամէնուն համար, հաւասարապէս, որովհետեւ բնութիւնը բացառութիւն չընդունիր։

Գիտութիւնը սնտոի պերճանք մը չէ՝ ինչպէս երբեմն թերեւս կը կարծուէր, այլ նո՛յն իսկ մեր պէտքերուն ամէնէն լուրջը և ամէնէն կենսականը։ Մինակ խօսելու յատկութիւնը չէր որ ինքնին բաւական պիտի ըլլար մարդը անասնական աշխարհէն զատելու, առանց ուրիշ առաւելութիւններու, կենդանի Ֆոֆօկրաֆներու պիտի հանդիպէինք միայն։ Ու ո՛րքան խղճալի, ո՛րքան տխրառիթ է մտածել թէ՛ կան մարդիկ որոնք կ'ապրին, կը շրջին երկրի վրայ, առանց զայն ճանչնալու, կը դիտեն երկինքն, առանց հետաքրքրուելու, կ'ուտեն, կը խմեն, կը խօսին, կը լսեն, կը քնանան, կ'արթնան, կը գործեն, կը յոգնին — մէկ խօսքով, կ'ապրին, կը գործին ու կը մեռնին, առանց երբեք փնտռելու բոլոր ատոնց պատճառները և անոնց՝ կարելի եղածին չափ անվնասօրէն համակերպելու միջոցները։ Նո՛յն մեքենականութիւնն իրենց գործեն մէջ ալ, որ միշտ նախնական միշտ նահապետական կը մնայ և անբաւական՝ օրաւոր աճող կեանքի այլազան պահանջումներուն։

Մէկ կողմ առնելով «Գիտութիւնը՝ գիտութեան համար» գեղեցիկ սկզբունքը, որ մասնագէտներու խտելին չուկէտը լինելով, յարաճուն ջանքերու և փորձերու զոհողութեամբ ամէն օր զմեզ հանդիսատես կ'ընէ գիտութեան նորանոր հրաշքներուն, մենք հիմա կ'ուզենք քննել թէ՛ գաւառական համայնքը իր գանազան խաւերով, զուրկ չէ՞ գիտական օրէնքներու գեթ տարրական ծանօթութիւններէն, որոնք անհրաժեշտ են ամէն ապրողի և գործողի համար։

Այս տեսակէտով, գաւառական ժողովուրդը երեք դասակարգի կրնանք բաժնել։

1. — Ռամիկը, (երկրագործ, բանւոր, արհեստաւոր)։

2.— Միջին և բարձր դասակարգը (խանութպան, վաճառական, հասառու)։

3.— Ուսեալները (ուսուցիչ, բժիշկ եւայլն)։

Ա.— Երկրագործը՝ գաւառին մէջ՝ հողին հետ ապրող գոյութիւնն է, մազին չափ չչեղած հին, նահապետական ժամանակներու դրութենէն, որ տաժանագին աշխատութեանց տուայտանքին փոխարէն հազիւ խեղճ ու կրակ ապրուստ մը բաժին կը հանէ իրեն։ Հակառական ու միակողմանի ջանքերով մինչ ֆիզիքականը կը քայքայուի. միեւնոյն ատեն միտքն ալ կը ցամքի, կ'անասնանայ, կնթարկուած մշտնջենի լծացումին եւ ապրուածքի խառնափնթոր պայմաններուն։ Գեղջուկը որ կը հերկէ հողը՝ չի ճանչնար զայն, գաղափար չունի անոր իսկական առանձնայատկութիւններուն վրայ, ու սերմը կը նետէ հոն, չէ՛ թէ չափուած, ձեւուած ու ծրագրուած ակնկալութեան մը սրտապանդումով՝ այլ որովհետեւ իր պապերն ալ ա'յնպէս ըրած են, մին արտին և առուոյտին եւ միւսը ածունելուն մէջ։ Ռամիկ-երկրագործն իր տեսածը կ'ընէ մեքենաբար, առա'նց աւելիին հետամտելու, ասոր համար. դարերու մշտնջենաւորութեամբ՝ կառչած կը մնայ նախնական արօրին ու մանգաղին, ասոր համար է որ իր ահագին աշխատութեան արդիւնքը բաղդին քմահաճոյքներուն կը յանձնէ։— Մինչդեռ մեքենայն աջ բազուկն է, հիմա, զարգացած հողագործին. նոր դրութեամբ պատրաստուած հերկող ու հնձող մեքենաները քիչ ժամանակի մէջ և քիչ աշխատութեամբ անհունապէս աւելի բեղմնաւոր կը դառնան, հողագիտութիւնը թափանցելով հողին բոլոր յատկութիւններուն ճշդուած հաշիւներու եւ գործնական փորձերու վրայ հաստատած է ամէն աշխատութիւն, և ափ մը ցորեն իսկ բաղդին չի յանձնուիր։ Մեր կողմերու երկրագործը, կ'ուզէ հեռի մնալ գիտութեան տարրական ծանօթութիւններէն իսկ և բնականօրէն միշտ կը տուժէ, թէ՛ գործին, թէ՛ տընական կեանքին մէջ։ Երեւակայեցէք թէ, ժամանակի և ուժի օրական շուայլ վատնումէն յետոյ, երբ բազն ուսին խեղճն արտէն տուն կը դառնայ, ճամբան կտրատող առուներուն և աղբիւրներուն վրայէն ջեքելով. չի՛ խորհիր ինքզինքը մաքրել, լաւ մը լուացուիլ՝ այդ առատ ջուրերով գեթ, ու կ'երթայ լճանալ տունին ճենճոտ ու աղտեղի առիքին տակ, ուր տիրող գձձութիւնները, հագուստի, ուտեստի և ապրուստի ամէն պայմանները ժամադիր եղած են կարծես՝ ամէնէն ուժեղ կազմուածքն իսկ ցեցոտելու։

Ու գեղջուկին համար. դեռ ամպերու որոտումը «Եղիայի կառքին ձայնն» է. գիշերները խորհրդաւոր ճիւղներով լեցուն կը

կարծէ ան, ագռաւին կռինչը, բուին կանչը՝ ցնորական եթադ-
րութիւններ կը ներշնչեն իրեն, ինչպէս որ գանկի մը
ճակտի ոսկորներուն մազանման յօդաւորումները ճակատագրին
արձանագրութիւնը կը նկատէ։ Միեւնոյն միաստութեամբ կը
հաւատայ երազներուն, իր գործերը, կեանքն ամբողջ պատշա-
ճեցնելով քունի այդ անհիմն երեւոյթներուն, որոնք արթուն
վիճակի մտաւորական գործունէութեան որակին եւ ֆիզիքականի
յարափոփոխ հանգամանքներուն արդիւնքն են պարզապէս։ Ո՛չ
նուազ անհեթեթ եւ ընդհանրապէս աղետարեր կ'ըլլան զանազան
հիւանդութիւններու յարմարցուած խեղկատակ դարմանումները,
բախտախնդիր վհուկներու, կախարդներու, թղթարարներու եւ
նմանօրինակ արհեստներ ստանձնող կարգ մը քահանաներու ձեռ-
քով։ Սակայն աւելորդ է ըսել, թէ սա՛ տեսակ հաւատք մը, հին
նահապետական օրերուն՝ թերեւս երջանկութեան միակ գաղտ-
նիքն ըլլար, բայց հիմա ուրիշ բանի չի ծառայեր եթէ ոչ կղերի
ընչաքալց չահագործումին։

Այսպէս բանւորն եւ արհեստաւորն ալ առհասարակ, մտաւո-
րական կեանք չունին երբեք, աշխատութիւննին սոսկ ֆիզիքա-
կան է, ի հաշիւ դարձեալ ֆիզիքական կեանքին, որ սակայն կը
քայքայուի, կը փճանայ, զուրկ մտքին գործակցութենէն։ Քչիկ
մը մտածում, հնարագիտութեան պզտիկ փորձ մը չի տեսնուիր
իրենց կողմէն։ Տգէտ տուժողներ են բնական օրէնքներու հան-
դէպ եւ մնայուն սկսնակներ՝ իրենց գործին մէջ, որու գազանիք-
ներուն թափանցելու եւ վարդաճախու համար պէտք եղած մտքի
ոյժն ու պաշարը չունին։ Քանինե՛ր կան, օրինակի համար, ո-
րոնք տարիններով, չաասնեակ աւարիններով մետաքսի կամ ուրիշ
գործարաններու մէջ կ'աշխատի, առանց երբեք ծանօթ ըլլալու
ամբողջ արհեստին։ Որով կը պաշապին, առերեւոյթս սոսկ ոտքի
չարժում մը կամ չուան մը քաշել ըլլալով իրենց ըրածը, մինչ
միայն այդ աշխատութեամբ է որ, խելքի ու մտքի հնարքներով
սարքուած մեքենաները՝ ահագին արդիւնքներ կ'արտադրեն,
ի նպաստ գործարանատէրին։

Բ. — Երկրորդ դասակարգի պատկանողները, դիպուածներու
բերումովն ընդհանրապէս՝ նիւթական գերակշռութիւն մը ձեռք
բերած՝ իրենց խախուտ բարեկեցութիւնը պահպանելու ջանքե-
րուն մէջ կեանքն ամբողջ ընդվզում մը կը դարձնեն, բնական
օրէնքներու հակառակ։ Դիպուածը, ներկայացող առաջին պատե-
հութիւնը չահագործողներն են իրենք, Գործառնութիւննին,
նիւթական յառաջացումի, զարգացումի ջանքերնին գիտական

հիմ չունին: Ձեռնարկները, որոնց կը մշտնապես, զուրկ են հեռա-տես գիտակցութեան մը երաշխիքէն ու հետեւաբար միշտ ենթա-կայ անկումի, կործանումի ամենօրեայ սարսափին, որ Դամոկլէ-սի սուրին պէս միշտ կախուած կը մնայ իրենց վերեւ:

Սկսինք խանութպաններէն: Ձգենք թէ ասոնք գործին գաղտ-նիքները դեռ չուսումնասիրած չուկայ կը նետուին, մի միայն ի-րենց աղմկալից արկօթերէնին վստահելով, ամէնէն ֆլասակաւորն այն է որ խեղճերը գէթ քիչ մըն ալ գրել կարգաւ չեն գիտեր, իրենց ծախածը ու շահածը եւ մանաւանդ ապաւելիներն արձա-նագրելու համար: Երեւակայեցէ՛ք խանութպաններ կամ փերե-զակներ, որոնք միսֆերին կը պաննեմ իրենց բոլոր առնելիքները և հաշուեցէ՛ք՝ թէ օրական առնուազն յիսուն անգամ պէտք կ'ու-նենան բան մ'աւելի բարդելու հէգ յիշողութեան վրայ, կարծեմ նոյն իսկ աւելորդ է բառ մ'ալ կցել այս տողերուն, ցոյց տալու համար՝ այս դրութեամբ անոնց կրած բազմապիսի փաստները, զորս ինքնին կարելի է հետեւցնել արդէն:

Անոնցմէ զատ, գաւառային վաճառականներէ որոնք մտած-ուած սկզբնաւորութեամբ մը գործի սկսած են, գծելով ճամբայ մը ուրկէ կարենային ընթանալ՝ կարելի եղածին չափ զերծ անա-կնկալներու խառնակ քմահաճոյքներէն: Ահագին դրամագլուխ-ներն իսկ որոշ կռուանէ մը զուրկ բազդին բերումներուն յանձ-նուած են, սպասելով քմայքոտ դիպումին, որ յեղյեղուկ պատրանքներ միայն ունի: Սոսկ օրինակ մը տուած ըլլալու համար, պիտի գարմանա՞ք երբ ըսեմ թէ՝ տոմարագիտական կա-նոնաւոր գործողութիւններ մուտ գտած չեն ցարդ, առեւտրա-կան մեծամեծ տուններուն մէջ իսկ և մատի վրայ կը համրուին նոր վաճառականներու այն քիչուր դասակարգէն եզոզները, որոնք կը ջանան օգտուիլ հաշուակալական վերջին նորութիւններէն. ճարպիկութիւնը, միայն ճարպիկութիւնն է համարուած գաւառի հայ վաճառականութեան ալֆան եւ օմեղան որ մեր ցեղային գեղեցիկ գործունէութեան միանալով՝ վաճառականներու, դրամատէրերու բարեկեցիկ դասակարգն ստեղծած է: Անոնցմէ շատեր հիանալի գործի մարդեր են, վերի կրկին յատկութիւննե-րով օժտուած, բայց ո՛րքան աւելի լայն ու բեղմնաւոր պիտի ըլ-լար իրենց ասպարէզը, ո՛րքան աւելի յարատեւ իրենց յառաջա-ցումը, եթէ եւրեք գիտական պահանջուած վարդացումին երաշ-խաւորութեամբ՝ հաստատուն ու շրջահայեաց գիտակցութիւն մըն ալ միացուցած ըլլային իրենց ճարպիկութեան ու գործունէու-թեան:

Այն ատեն, առեւտրական աշխարհը անակնկալներու քառս մը


չպիտի համարուէր իրենց համար, գէթ շատ սահմանափակուած ըլլալով չկանխատեսուած ելեւէջներու հակազդեցութիւնը: Կաշիի վաճառականը, վաղը՝ յանձնակատար, միւս օր՝ բամպակ ծախող և ուրիշ օր մըն ալ՝ մանրավաճառ չպիտի դառնար: Իրարմէ բոլորովին տարբեր, անծանօթ գործերու մէջ՝ յարափոփոխ թափթը-փածուութիւն մը ցուցադրելով միայն: Ամէնէն գէշ նշանն է արգէն գործ փոխելը յա՛ր եւ նման հիւանդի մը բարձ փոխելուն: Անկայութիւնն անկարողութիւն կը մատնէ, որուն դարմանն է մը-տաւորական դարգացում:

Շարունակելի

ԼԵՒՈՆ ՍՐԱՊԵԱՆ

ԳՈՐՏԵՐ ՈՒ ԴՈԴՈՇՆԵՐ

Կիւլանայի ճահիճներուն մօտ կը տեսնուին Ռաքօֆօր և Բիբա երկու տարօրինակ գորտերը որոնք թէեւ միեւնոյն դասակարգին կը պատկանին, բայց իրարմէ շատ տարբեր յատկութիւններ ու-նին:




Առաջինը նրբահասակ, երկար թաթերով ու խիստ շնորհալի կենդանի մըն է. մատներուն ծայրը լայն ուռեցքներ կան որոնց-մով կոխած տեղը ամուր փակած կը մնայ: Կունակը գեղեցիկ կապոյտ գոյնով է սեւ բիծեր ցանցընուած, իսկ փորը նարնջադոյն դեղին է սեւ բիծերով, աչքերը տարապայման կերպով

խոշոր են. ուղները (ոտքի ետեւի մասերը) շատ լայն բացուած են, այնպէս որ, այս սիրուն երկակենցաղը կարող է մէկ ծառէ ուրիշ մը ցատկել թռչունի մը պէս:

Երկրորդը, ճիւղալային դողող մըն է, աղտոտ սեւ գոյնով մը, առջեւի անդամները խիստ մանր են մինչդեռ ետեւիները շատ մեծ, և ծայրերը սատանայի ճիւղաններու պէս ճանկեր ունի որոնք կենդանիին կեցած ժամանակը կարծես թէ գետինը զամուռած են: Աչքը այնքան մանր է, որ հազիւ թէ կարելի է տեսնել:

Բիրա իր այս ցուցանք երեւոյթին հակառակ անանկ զարմա-



նալի սովորութիւն մը ունի որ զինքը ամէնէն հետաքրքրաշարժ կենդանին կ'ընէ.— երբ էգը հաւկիթները կ'ածէ, արուն՝ զանոնք առնելով մէկիկ մէկիկ իր բնկերուհիին կռնակը կը դնէ: Հաւկիթները իրենց համար փոս մը կը շինեն էգին մօրթին մէջ և հոն կը ճայթին ու պզտիկները դուրս կ'ելլեն: Երբ նորածիները իրենց փոփոխութիւնները կրեն, էգ Բիրան մօրթը կը փոխէ եւ ծագերը դուրս կը հանէ:

Տեղը չէ՞ մատնանշել այն խնամքը, զոր Բնութիւնը ստանձնած է հանդէպ իր արարածներուն, նոյն իսկ եթէ ամէնէն շընորհազուրկը ու տգեղը եղած ըլլայ ան:

Լ. ՌԱՆԷ

ՊԶՏԻՆ ՔԼՕ, ՄԵՄ ՔԼՕ

Քաղքի մը մէջ կը բնակէին երկու մարդեր որոնք միեւնոյն անունով կը կոչուէին—Քլօ։ Բայց մէկը ունէր չորս ձի ու միւսը մէկ հատ միայն, արդ, իրարմէ զանազանելու համար, առաջինը մեծ Քլօ կ'անուանէին, և միւսը պզտիկ Քլօ։ Մտիկ ըրէք ուրեմն, թէ իրենց ի՛նչ պատահեցաւ,—վասնզի ճշմարիտ պատմութիւն մըն է զոր պիտի ընեմ։

Ամբողջ շաբթուն, պզտիկ Քլօ ստիպուած էր հերկել մեծ Քլօյի հողը ու անոր փոխ ապ իր մէկ հատիկ ձին. ասոր փոխարէն, մեծ Քլօ իր չորս ձիերովը կ'օգնէր անոր՝ շաբթուան մէջ մէկ անգամ—կիրակի օրե՛ր միայն։ Ծրա՛խ, օ՛հ, պզտիկ Քլօ ինչպէ՛ս կը շաչեցնէր իր մտրակը՝ հինգ ձիերուն վրայէն։ Իրեններուն պէս կը նայէր զանոնք։ Արեւը կը փալփէր չքեղօրէն։ Ամբողջ զանգակները մարդիկը եկեղեցի կը հրաւիրէին. մարդերն ու կիները իրենց ամէնէն նոր հագուստները հագած կ'անցնէին պզտիկ Քլօյի առջեւէն, որ, հողը հերկելով ուրախ զուարթ, կը շաչեցնէր իր մտրակը՝ պօռալով։

— Տի՛հ, ձիե՛րս։

— Մի՛ ըսեր ձիերս, գոռաց անգամ մը մեծ Քլօ, դուն մէկ ձի մը ունիս։

Բայց պզտիկ Քլօ շուտով մոռցաւ այս ազդարարութիւնը, և, ուրիշ քանի մը մարդոց անցնիլը տեսնելով, չկրցաւ ինքզինքը զսպել՝ դարձեալ պոռալէ. «տի՛հ, ձիե՛րս»։

— Վերջին անգամ ըլլալով, ըսաւ անոր մեծ Քլօ, մի՛ կրկներ մէյ մըն ալ աս խօսքերը։ Հակառակ պարագային, ձիուդ ճակտին անա՛նկ հարուած մը պիտի տամ որ, վայրկենապէս գետին իյնայ, մէկէն։

— Ա՛լ անգամ մըն ալ չեմ ըսեր, պատասխանեց պզտիկ Քլօ։

Բայց երբոր ուրիշ մարդիկ անցան ու զինքը բարեւեցին բարեկամօրէն, ինքը շա՛տ գոհ եղաւ, ու հպարտ՝ հինգ ձիով կարենալ հերկելուն համար իր դաշտը, շաչեցուց մտրակը ու պօռաց. «Տի՛հ, ձիերս»։

— Պիտի սորվեցնեմ տի՛հը ձիերուդ, ըսաւ մեծ Քլօ։ Ու մեծ լախտ մը առնելով, անանկ հարուած մը իջեցուց պզտիկ Քլօի ձիուն ճակտին որ անմիջապէս ստտկեցաւ ձին։

Իր տէրը սկսաւ ողբալ ու հեծել։ Վերջապէս ձիուն մորթը սկըթեց հանեց, հովին չորցուց, առպարակի մը մէջ դրաւ, ու

ճամբայ ինկաւ դէպի քաղաք՝ ծախելու համար զայն :

Ճամբան երկայն էր ու պէտք էր անցնիլ մեծ անտառէ մը . այն օրն ալ սոսկալի օդ մը կար : Պղտիկ Բլօ մոլորեցաւ , ու դեռ վատահելի ճամբան չգտած գիշերը վրայ հասաւ . պէտք եղաւ քաղաք մտնելէ ետ կենալ :

Ճամբուն եզերքը կը գտնուէր մեծ ագարակ մը , ու , թէեւ պատուհանին փեղկերը գոց էին , դարձեալ լոյսը դուրս կը ցոլար : « Թերեւս կրնամ հոս գիշերել » , խորհեցաւ ան ու դուռը զարկաւ : Կինը դուռը բացաւ . բայց , երբոր հասկցաւ թէ ի՛նչ կ'ուզէր , ըսաւ թէ պէտք է շարունակէ իր ճամբան , որովհետեւ էրիկը դուրս ելած ըլլալուն , չէր կրնար որ և է օտարական մը ներս ընդունիլ :

— Շա՛տ աղէկ , դուրսը կը պառկիմ , պատասխանեց :

Ու կինը նորէն գոցեց դուռը :

Տունին մօտիկը որայամբար մը կար՝ ծղոններու յարդով ծածկուած տանիքով մը : « Հոս կը պառկիմ , ըսաւ պղտիկ Բլօ , անկողինը լաւ է ու վտանգ մը չկայ թէ արագիլը իմ ոտքերս խածնէ » :

Տանիքին վրայ , իր բոյնին մօտ , արագիլ մը կը թառէր :

Որայամբարին մէջ սողոսկեցաւ ու հոն պառկեցաւ : Հազար անգամ չորսդին դառցաւ հանգիստ քնանալու համար : Տանը փեղկերը ամբողջովին գոցուած չըլլալով , կրցաւ տեսնել ինչ որ կ'անցնէր կը դառնար սենեակին մէջ .

Մէջտեղը կը կանգնէր սեղան մը որուն վրայ կային խորովոյք մը , ձուկ մը ու շատ մը գինիի գաւաթներ : Գեղջկուհին ու ժամուն դասապետը հոն նստած էին ուրախ զուարթ ու աղուոր աղուոր կ'ուտէին :

« Ի՛նչ երջանիկ են » ըսաւ պղտիկ Բլօ : Ու գլուխը երկնցուց աւելի աղէկ տեսնելու համար : Կինը սեղանին վրայ բերաւ համեղ կարկանդակ մը : Օ՛հ , ի՛նչ խնջոյք :

Յանկարծ ձիաւոր մը մօտեցաւ տունին — գեղջկուհին էրիկն էր որ տուն կը մտնէր : Ամէն մարդ զինքը կը յարգէր իբր բարի մարդ , բայց եզական հիւանդութիւն մը ունէր — առանց կատարելու չէր կրնար տեսնել դպիր մը : Երգիչը որ գիտէր աս , առիթէն օգտուելով այցելութեան եկած էր կնիկանը ու ողջունած էր զայն , երբ էրիկը բացակայ էր . ու բարի կինը զինքը պատուած էր աղուոր ճաշ մը հրամցնելով , լեհաճոյ տեսարաններու տեղի չտալու համար , երբ իմացաւ որ իր այրը կուգար , իր հիւրէն խնդրեց որ մեծ պարապ սնտուկին մէջ պահուրտի , ինչ որ յօժարութեամբ կատարեց ան , քանի որ կը ճանչնար գիւղացիին այս հիւանդութիւնը : Յետոյ կինը ուտելիքն ու գինին

փուռին մէջ խօթեց շուտընդփոյթ, որպէս զի էրիկը նեղացուցիչ հարցումներ չընէ իրեն։

— Ի՞նչ կորուստ, հառաչեց պզտիկ Քլօ որայամբարին մէջէն տեսնելով կարկանդակին անհետանալը։

— Ո՞վ կայ հոն, գոչեց գեղացին ետին դառնալով ու նշմարեց պզտիկ Քլօն։ Ինչո՞ւ հոտ կը պահուըտիս։ Տուն եկո՛ւր։

Պզտիկ Քլօ անոր պատմեց թէ ինչպէս մոլորած էր ու անկէ գիշերուան համար ասպնջականութիւն խնդրեց։

— Յօժարակամ կ'ընդունիմ, պատասխանեց գիւղացին, բայց նախ պատառ մը բան ուտենք։

Կինը զանոնք ընդունեցաւ բարեկամօրէն, նորէն պատրաստեց սեղանը ու խոշոր պնակ մը ցորեն բերաւ։ Գեղջուկը որ անօթի էր, լաւ ախորժակով մը կերաւ. բայց պզտիկ Քլօ կը խորհէր խորովոյքին, կարկանդակին ու գինիին, որոնք փուռը պահուած էին։ Զիտուն կաշին պարունակող տոպրակը սեղանին տակ ձգած էր, որովհետեւ իր քիմքին չէր գար ցորենը, ոտքերով տոպրակին կրթնեցաւ ու ճարճատեցուց կաշին։

— Լռէ՛, ըսաւ իր տոպրակին, բայց նոյն վայրկեանին ա՛լ աւելի ճարճատեցուց։

— Ի՞նչ կայ տոպրակին մէջ, հարցուց շինականը։

— Վհուկ մը, պատասխանեց Քլօ. չուգեր որ ցորեն ուտենք, ինծի կ'ըսէ որ, իր կախարդանքին գօրութիւնովը, փուռին մէջ կը գտնուին խորովոյք մը, ձուկ ու կարկանդակ մը։

— Անկարելի է, ըսաւ գեղջուկը փութով բռնալով փուռը. բայց հոն գտնուածները տեսնելուն, կարծեց թէ վհուկը գործած էր այս հրաշքը։ Կինը, առանց բան մը ըսելու համարձակելու, ամէնքն ալ սեղանին վրայ տեղաւորեց ու սկսան ուտել։

Քլօ նորէն կրճատեցուց իր կաշին։

— Հի՞մակ ինչ կ'ըսէ կոր, հարցուց գիւղացին։

— Կ'ըսէ թէ փուռին մօտ երեք շիշ գինի դրուած է։

Կնիկը սեղանին վրայ բերաւ գինին, ու էրիկը սկսաւ ճնկել ուրախ զուարթ։ Ինք ալ փափաքեցաւ անոր պէս տոպրակի մէջ վհուկ մը ունենալ։

— Կ'ուզեմ որ ինծի ցուցնէք սատանան, ըսաւ գեղջուկը, ինծի հաճոյք մը պիտի պատճառէ ատ։

— Իմ վհուկս կրնայ ընել ինչ որ իրեն հարցնեմ։ Յետոյ նորէն կրճատեցուց տոպրակը։ Կ'իմանա՞ս կոր, այո՛ կ'ըսէ, բայց սատանան զարհուրելի է։

— Օ՞հ, ես չեմ վախնար։ Ի՞նչ կերպարանք ունի։

— Մեր առջեւը ձայնաւորի մը ձեւին տակ պիտի երեւայ։


— Ա՛յ, ի՛նչ անախորժ բան է աստ. չեմ կրնար ձայնաւորի մը տեսքին հանդուրժել: Հո՛գս. եթէ գիտնամ թէ սատանան է, քաջասրտութիւն կրնամ ունենալ: Միայն թէ, ինձի չմօտենայ:

(Շար.)


ԱՆՏԷՐՍԸՆ

Թարգմ.

Վ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ



ԳԻՏԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔ



ՇԵՐԵՓԻ ՄԸ ՀԱՒԱՍԱՐԱԿՇՌՈՒԹԻՒՆԸ

Առէք զմելին մը եւ կէս մը բանալով դրէք սեղանի մը եզրին վրայ, ինչպէս ցոյց կուտայ մեր պատկերն. ապա շերեփը կախեցէք զմելինին կոթին և երկաթին անկիւնէն, շերեփին գոգաւոր կողմը սեղանին դարձնելով՝ թող տուէք զայն. զմելինը կը ճօճի և շերեփը կը տատանի մինչեւ որ հաւասարակշռութիւնը գտնէ:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ ՀԱՆՐԱԳԻՏՄԱՆ

Արդնի Մասն, Յ. էֆ. Ս. — 1-6 թիւերը վերստին ղրկուեցաւ ձեր հասցէին:

Տրապիզոն, Յ. էֆ. Ս. Մ. — Ստացանք բաժնեգրին. 1-14 թիւերը ղրկուեցան:

Սամսոն, Յ. էֆ. Ն. — Ձեր վերջին նամակն ստացանք: Կ. էֆ. Տ. ի թերթերը Կեսարիա կը ղրկուին. հասցէն իմացուցած էր մեզ:

Էրպաւա, Կ. էֆ. Գ. — Թերթերը կը շարունակուին: Շնորհակալ եմ ձեր սրտագին բարեմաղթութեանց համար. դիւրիմացութիւն մըն էր եղածը և ոչ այլ ինչ:

Կիւն, Յ. էֆ. Հ. — Ստացանք ձեր նամակն ու դրամը: Գրեցինք Բարիզի մեր թղթակցին հարկ եղածը: Պատասխանը անմիջապէս ձեզ կը հաղորդենք միւս մասերուն վրայ ալ լիուրի տեղեկութիւններ հաղորդելով:

Իզմիր, Կ. էֆ. Մ. — Ստացանք, շնորհակալ ենք:

Ամասիա, Հ. էֆ. Խ. — Գանձեցինք Անգլ. թղթատունէն և Իզմիրի դրամը վճարեցինք:

ԳՐԱՏՈՒՆ

Ն. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ ԵՒ Կ. Ս. ՏԷՄԻՐԵԱՆ

Տպարանս, որ երկար տարիներէ ի վեր ճշդապահ ու պատուաւոր գործառնութեամբ մը խիստ համակրելի անուն մը շահած է հրապարակին վրայ, իր ԳՐԱՏԱՆ ճիւղին յարաճուն յաճախորդներուն գոհացում տալու և կատարուած յանձնարարութիւններու վայրկեանական ճշդութեամբ պատասխանելու համար, աւելի ընդարձակած է իր այդ ճիւղը և ընկեր առնելով Կ. Ս. ՏԷՄԻՐԵԱՆ էֆ., ձեռնարկած է նոր ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅ մը բանալ:

Կ. Ս. ՏԷՄԻՐԵԱՆ էֆ. ծանօթ ուսուցիչ և գիտական քրոնիկագիր, հինգ տարիներէ ի վեր կը վարէ Կէտիկ-Փաշայի կարեւոր թաղին Երկսեռ վարժարաններու տեսչութիւնը, հեղինակած է Իրադիտութեան, Ընթերցանութեան եւ Ֆրանսերէնի դասընթացքներ որոնք ամէնալաւ ընդունելութիւնը գտած են թէ Մայրաքաղաքի և թէ Գաւառի գլխաւոր վարժարաններու մէջ:

Գրատանս վարիչները՝ մին ունենալով երկարամեայ փորձառութիւն և հրապարակի կատարեալ ճանաչողութիւն, և միւսը արդէն իսկ կարող ուսուցիչ մը և հեղինակ վարած ըլլալով կարեւոր վարժարանի մը տնօրէնութիւնը, նախանձելի կազմակերպութիւն մը կուտան սոյն գործին:

Ներկայ դպրոցական շրջանի համար հարկ եղած դասական գրքերու և դպրոցական պիտոյքներու յանձնարարութեան համար մանրամասնութիւնները կարգաւ կողքին 2 եւ 3 էջերուն վրայ, և կամ թղթատարական քարգով մը տեղեկութիւն ուզել՝ որ պիտի տրուի լիուրի և ամենակարճ ժամանակի մէջ:

Հասցէ՝

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, Պապ Ալի ձատտէսի, Թիւ 38

ԽՐԱՎԱԳՐԱՊԵՏ-ԱՐՏՈՆԱՏԷՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը Ալի ձատտէսի, Թիւ 38, Մանգումէի տպարանին կից

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԻԱՆ ԵՒ ԿԱՐԱՊԵՏ Ս. ՏԵՄԻՐԵԱՆ պատիւ ունին ծանուցանել գրեթէ հասարակութեան թէ իմասնաւորի Գաւառի վարժարանայ տեսութեանց գիւրութիւն մը ըլլալու նպատակաւ նոր ԳՐԱՏՈՒ Պրիմիաձ ԵՆ որ պիտի զբաղի հետեւեալ գործառնութիւններով:

Կը հայթայթէ, ԲԻ Մայրաքաղաքի վեջեայ Թիմաւաներու մէջ, Հայերէն, Թուրքերէն, Ֆրանսերէն, Անգլիերէն ու Գերմաներէն հրատարակութիւններ՝ Դպրոցական Դասագիրք, Վեպ, Թատրերգութիւն, Գիտական Հեղինակութիւն, Պարբերական ու Հանդէս:

Դպրոցական Գրքատուն և պրիմիաձերով հայթայթման մասին տեղեկութիւններ գեղջը Կառապար (330) ձի քր հրատարակութիւններուն համար, իսկ միւս գրքերուն ալ համեմատական չափէնէն բարձր գեղջը) և վճարողներու համար անյուսալի գիւրութիւններ կ'ընծայէ (այժմայի՛ն յատկապէս կը բանակցինք):

ՏՊԱՐԱՆ-ԳՐԱՏԱՆՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵՆ
ԻՐԱՅԻՏՈՒԹԻՒՆ, Դործնական եւ Արհեստական (Տարրական) Դրուշ

Վաճառք (Միջին, Ա.) Գումար 4

ԲՆԱԳՐԱՏՈՒԹԻՒՆ, ԵՒ ԲՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ (Միջին, Ա.) Գումար 5

ՄԵՆՏՈՒ ՄԱՆԿԱՆՑ, Ալֆապէ Ֆրանսերէն (Բարձրագոյն) Գումար 7

» » Երկրորդ Դիրք Ֆրանսերէնի Գումար 2

ԱՌԱՋԵՈՐԴ ՄԱՆԿԱՆՑ Երրորդ Գումար 4

ԵԱԿԱԳԱՐԱՂ ՄԱՆԿԱԿԱՆ ԴԱՍԵՐՈՒ, Հայ Ընտերցարան Գումար 6

» ՏԻՊԱՐ ԳՐԱՏՈՒ, Միջին Ընթացք Գումար 3

ԵԱԿԱԳԱՐԱՂ ՀԱՅ. ԵՒ ԵԱԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ Գումար 4

ՀԻՆ ՈՒԽՏԻ (Սրբազան Պատմութիւն) ՍԱՀԱԿԵԱՆՑ Գումար 4

ՊՐԱՅԻՏԻՒՆ ԳՐԱՏԱՆՑ Գումար 4

ՄՈՒՐԲ ԵՐԿԻՐ Կամ Կարճագրութիւն Ս. Երուսաղէմի Գումար 12

ԱՂԾԱԳԻՐԻՔ Հայ. Ա. Եկեղեցւոյ (Բ. Տիպ) Գումար 10

ՃՈՂՈՎԱՐԴԱԿԱՆ ՏԱՐԵԶՈՅՑ Գն զետեղութեամբագ Գումար 6

ՏՈՂԱԿԱՐ Հայ. Ս. Եկեղեցւոյ Գն զետեղութեամբագ Գումար 12

ԳԱՄԷԼԻԱԶԱՐԴ ՏԻՊԻՆ Գումար 10

ԲՈՒՐԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱՆՑ Գումար 10

Սոյն ցանկը որով կը պարունակէ մեծագիտութեան և Հայ Ընտերցարանի տեսութեան, Ֆրանսերէնի, Կրօնագիտութեան, Գրքագրական դասընթացներ, հետզհետէ պիտի ճոխանայ ուրիշ դասընթացներով, ամենակարճ ժամանակի մէջ:

Գրատունս կը հայթայթէ նաեւ Մանկապարտէզի և Ֆիէօպէլեան նուէրներ և առարկաներ, ինչպէս նաեւ ամէն տեսակ պիտոյք՝ թուղթ, տետրակ, մատիտ, աշխարհայոյց կամ համայնապատկեր քարդեր, եւ այլն:

Գրատանս Տնօրէնութիւնը փոքրագիտական ուսուցչական փորձառութիւնով և բազմաթիւ ծանօթ ուսուցիչներու հետ ունեցած յարաբերութիւնով կը յետադիմի, օգտակար ըլլալ թէ մայրաքաղաքի և թէ գաւառներու Պատ. Թաղա Սորերքաց, Հոգաբարձութեանց և վարժարաններու տեսչութեանց և Դպրոցական ամէն տեսակ պէտքերու հայթայթումէ գատ, գիւրութիւն ընծայելով նաեւ ուսուցիչ և վարժարան հայթայթելու և փոփոխութեամբ պաշտօնին համեմատ պաշտօնեայ զրկեցիկ մասին:

Հասցէ՝ Տալաթի Նեան Կ. Պէրպերեան

Կ. Պէրպերեան, Պապ Ալի ձատտէսի, Խիւ 38

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ
ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

Ներքև տարիներն ունենալ Հանրագիտակի կը հրատարակուի չարա-
թական 20-24 էջէ բաղկացեալ, եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը
պիտու յատկացուի Վանազնորդ վանատեղեանցի, 24 էջ:

Վանազնորդ վանատեղեանցի բաժանորդագրութիւնը չընդունուիր,
ՏԻՒՆԻՆԻ ԱՆՔԻՆ ԾՆԻՆ ԾՆԻՆ
ՊՈՒՆՈՒՆ ԾՆԻՆ
Գաւառացի
Արտասահման
Հատը
30 դրոշ
35 »
45 »
30 փաթաթ

Վանազնորդ վանատեղեանցի 12 տարի զատնել ուզողը պէտք
է վճարէ 12 դրոշ:

Բ Ի Ի Ր Ա Մ Ն
ՀԱՐԱԹԱԹԵՐԹԸ

Տարեգլխին սկսեալ քնդարձակուած կը հրատարակուի, ամէն անգամ,
նոխ ու շահեկան բովանդակութեամբ մը, պարունակելով գերեզմի
յօդուածներ, ստուգարուած կարող գրիչներէ:

Բերական իր ուղղութեամբք քն բովանդանութեամբք կը ճերկա-
յացնէ Վանազնորդ վանատեղեանցի քն արժանի քնքերցանութեան, լամէն
դատեալորդ անանորդ համար

ՀԱՍՅԷ
Պոլիս, Պալար, Վանազնորդ, Քաթի, Էն, խան, Բ. Բ. Յ. Յ.,
Բերական խմբագրութիւն:

Վերջ հրատարակութիւն Իւստեան Փոքրակալութեան

ՈՒՂԵՅՈՅՑ Գ. ՎԱՐՈՒԹԵԱՆ
ՀՐԱՀԱՆԴԵՐՈՒՄԻ ԼՈՒՆՈՒՄԻ

Դաստիարակութիւն եւ ինքնագարգացման փափագողներու համար
անհատեալ գիտէ:
Պոլիս, ՍՊԱՐՏ ԴԱՐՈՒՄԻ, ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ,
Կո Պոլիս, Սիւրբ Եփ, Խորասանճան խան